Հավելված N 3
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 21-ի N 595 - Ն որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Համայնքներին, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին պետական սեփականություն հանդիսացող գույքը (այսուհետ՝ տարածք) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում են միայն հետևյալ պայմանների բավարարման դեպքում.

1) համայնքի դեպքում, եթե

ա. N 3 օրինակելի ձևին համապատասխան ծրագիրն արժանացել է համայնքի ավագանու հավանությանը,

բ. ծրագիրը նպատակաուղղված է համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը միտված սեփական, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացմանը,

2) հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների դեպքում, եթե ներկայացված ծրագիրը համապատասխանում է՝

ա. N 3 օրինակելի ձևին համապատասխան գործարար ծրագրի պահանջներին.

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ոլորտային զարգացման ռազմավարական փաստաթղթերում ամրագրված՝ ըստ ոլորտների զարգացման քաղաքականության պահանջներին.

գ. տնտեսական կամ սոցիալական համապատասխան ոլորտում պետություն-մասնավոր հատվածի համագործակցության զարգացմանը.

դ. իրենց կանոնադրությամբ սահմանված նպատակին.

ե. ինչպես նաև առկա է ծրագրի իրականացման վերաբերյալ համապատասխան պետական մարմնի դրական կարծիքը:

2. Տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է համայնքներին, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին, որոնք համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված տեղեկատվության (բացառությամբ՝ համայնքների), գույքի անհատույց օգտագործման իրավունք ստանալու համար դիմելու պահին նախորդող հինգ տարվա ընթացքում չեն ունեցել սեփականության իրավունքով իրենց պատկանող շենք, շինություն, տարածք (բացառությամբ բնակելի տարածքի):

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ N 3

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Ընդհանուր տեղեկություններ պետական սեփականություն հանդիսացող գույքը (այսուհետ՝ տարածք) անհատույց օգտագործող՝ համայնքների, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների (այսուհետ՝ կազմակերպություն) մասին

1.1. կազմակերպության լրիվ անվանումը _____,

1.2. կազմակերպության ձևը _____,

1.3. կազմակերպության ստեղծման (վերակազմակերպման) ժամկետը _____,

1.4. կազմակերպության գրանցման վկայականի համարը _____,

1.5. գրանցման վայրը և տարեթիվը _____,

1.6. գործունեության հիմնական ուղղությունները _____,

1.7. գործունեության իրականացման վայրը (նստավայրը)_____,

1.8. փոստային հասցեն_____,

1.9. տվյալներ (հեռախոս/ֆաքս, էլեկտրոնային հասցե_____,

վեբ կայքեր _____,
(առկայության դեպքում)

1.10. կազմակերպության գործունեության զարգացման (այդ թվում՝ նաև գույքի բարելավման, եթե նախատեսվում է) ծրագիրը հաստատվել է _____ կազմակերպության իրավասու մարմնի 20 __ թ. _____ -ի N ___ - որոշմամբ,

1.11. կազմակերպության ղեկավար՝_____, հեռ. _____, կազմակերպության հաշվապահական ծառայության ղեկավար _____, հեռ. _____:

2. Կազմակերպության գործունեության համար հիմք հանդիսացող իրավական ակտերը և զարգացման ռազմավարական փաստաթղթերը (հաստատված ծրագրեր, ընդունված որոշումներ և այլն, եթե դրանք առկա են)

2.1. _____

(նշել կազմակերպության անվանումը)

իր գործունեության և ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, _____

(նշել կազմակերպության տվյալ տեսակին վերաբերող օրենքը)

օրենքով, «_____» կազմակերպության կանոնադրությամբ և այլ

իրավական ակտերով

_____,

(նշել ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, համարը և տեսակը)

2.2. _____

(նշել կազմակերպության անվանումը)

իր գործունեության և ներկայացված ծրագրի իրականացման համար առաջնորդվում է՝ ծրագրով_____,

(նշել ծրագրի անվանումը)

_____

(նշել որոշման (փաստաթղթերի) անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, հերթական համարը և տեսակը)

որոշմամբ (փաստաթղթերով),

2.3 _____

(նշել կազմակերպության անվանումը)

աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և այդ ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով:

3. Կազմակերպության գործունեության ոլորտը

_____ գործունեության ոլորտներն են՝

(նշել կազմակերպության անվանումը)

1) _____,

2) _____,

3) _____,

4) _____ և այլն:

4. Ծրագրի իրականացման համար առկա մարդկային ռեսուրսներն են

4.1. _____,

(ծրագրի ղեկավար կազմի անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն)

4.2. _____,

(ծրագրի իրականացման համար կազմակերպության մշտական և ներգրավված աշխատողների անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, մասնագիտություն)

4.3._____:

(տեղեկատվություն ծրագրին մասնակցող այլ անձանց մասին)

5. Կազմակերպության կողմից տարածքի օգտագործման ծրագրի նպատակը և խնդիրները

5.1 սույն ծրագրի իրականացման նպատակը հանդիսանում է՝

1) _____,

2) _____,

(եթե ծրագրի իրականացման նպատակը կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված և գործող ոլորտի կամ տարածքի սոցիալտնտեսական զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների հետ, ապա անհրաժեշտ է նշել որոշման անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, հերթական համարը և տեսակը)

5.2. սույն ծրագրի իրականացման ընթացքում լուծման ենթակա խնդիրներ են՝

1) _____,

2) _____,

3) _____ և այլն:

6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները և դրանց աղբյուրները

6.1. Սույն ծրագրի իրականացման համար առաջիկա _____ տարիների համար կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի ֆինանսավորման ընդհանուր մեծությունը կազմում է _____ ՀՀ դրամ, այդ թվում՝ ըստ ծրագրի իրականացման

(նշել չափը)

տարիների,

6.2. սույն ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են.

1) կազմակերպության միջոցները _____,

(նշել չափը և տրամադրումը ըստ տարիների)

2) կազմակերպության կողմից փոխառու միջոցները _____,

(նշել չափը և տրամադրումը ըստ տարիների)

3) դրամաշնորհներ _____,

(նշել չափը և տրամադրումը ըստ տարիների)

4) բարեգործների կողմից տրամադրվող միջոցները _____

_____,

(նշել կազմակերպության կամ ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանունը և ֆինանսավորման չափը ըստ տարիների)

5) այլ աղբյուրներ _____:

7. Ծրագրի իրականացման և տարածքի օգտագործման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել _____ տարիների ընթացքում:

8. Ծրագրի իրականացման համար նախատեսվող միջոցառումները

8.1. սույն ծրագրի շրջանակներում առաջիկա _____ տարիներին _____ կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները (այդ թվում՝ տարածքի բարելավման ուղղությամբ, եթե ծրագրով նախատեսվում է)

_____,

(նշել միջոցառումների անվանումը ըստ ծրագրի իրականացման տարիների)

_____,

8.2. սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է, որ կազմակերպությունը կապահովի

_____,

(նշել ծրագրի չափելի արդյունքները թվային ցուցանիշներով, շահառուների թիվը, մյուս անհրաժեշտ տեղեկությունները)

_____,

8.3. ծրագրի իրականացման ընթացքում իրականացվող բաժանելի բարելավումները (ձեռք բերվող գույքը) չեն համարվում տարածքի բարելավմանն ուղղված միջոցներ և համարվում են կազմակերպության սեփականությունը:

9. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքը

սույն ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ կազմակերպությունը ծրագրային ժամանակահատվածում (հնարավորության դեպքում՝ ըստ տարիների) կապահովի _____

_____,

(նշել ծրագրի չափի արդյունքները, մասնավորապես՝ կատարված աշխատանքները և ստեղծված արդյունքները՝ գիտական աշխատանքների սեմինարների հրապարակում, դասընթացների և խորհրդակցությունների անցկացում, բարեգործական և գիտակրթական միջոցառումների շահառուների թիվը, տարածքի բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքների պատկերային վերջնարդյունքները և ծախսերը ու ծրագրի վերջնական արդյունքներին առնչվող այլ տեղեկությունները)

_____:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

25.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ